

ՀԱՅԿԱԿՐԵԱԼ

ԵՐԳԵՑՈՂ ՈՒԹԻՒՆՔ

ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻ



ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇԵՈՐՀԱԼԻ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ

1105—1173



«Յօրագրի ՆՈՒՆՔ»,

ՊԵՏՐՈՍ

1938

ՀԱՆԳԱՆԱԿ ՆԻԿԻԱԿԱՆ

Հաւատամք ի մի Աստուած, ի Հայրն ամենակալ, յԱրարիչն երկնի և երկրի՝ երևելեաց և աներևութից:

Եւ ի մի Տէր Յիսուս Գրիստոս յՈրդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ Միածին, այսինքն յեւթեանէ Հօր:

Աստուած յԱստուծոյ լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ. յԱստուծոյ ճշմարտէ ծնունդ և ոչ արարած:

Նոյն ինքն ի բնութենէ Հօր՝ որով ամենայն ինչ եղև յերկինս և ի վերայ երկրի, երևելիք և աներևոյթք:

Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան՝ իջեալ յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ կուսէն՝ Հոգւովն Սրբով:

Որով էսա մարմին, հոգի և միտ, և զամենայն որ ինչ է ի մարդ, ճշմարտապէս և բշ կարծեօք:

Չարչարեալ, խաչեալ, թաղեալ յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ ի յերկինս նովին մարմնովն՝ նստաւ ընդ աջմէ Հօր:

Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր, ի դատել զկենդանիս և զմեռեալս:

Որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան:

Հաւատամք և ի Սուրբ Հոգին՝ յանեղն և ի կատարեալն:

Որ խօսեցաւ յօրէնս և ի Մարգարէս և յԱւետարանս:

Որ էջն ի Յորդանան, քարոզեաց զԱռաքեալսն և բնակեցաւ ի սուրբան:

Հաւատամք և ի մի միայն Ընդհանրական և Առաքելական Սուրբ եկեղեցի:

Ի մի Մկրտութիւն, յԱպաշխարութիւն, ի Քաւութիւն և ի Թողութիւն մեղաց:

Ի Յարութիւն մեռելոց, ի Դատաստանն յաւիտենից. Հոգւոց և մարմնոց յԱրքայութիւն երկնից, և ի կեանն յաւիտենականս:

(Յամի Տեսուց 326)

A 93729



ԱՂՕԹՔ ԻՒՐԱՔԱՆՁԻՐ ԱՆՁԻՆ
ՀԱՒԱՏԱՑԵԼՈՅ Ի ՔՐԻՍՏՈՍ
ՉՈՐ ԱՐԱՐԵԱԼ Է Ի ՍՐՔՈՅ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ

Ա

Հաւատով խոստովանիմ, և երկիրպագանեմ Քեզ, Հայր և Որդի և Սուրբ Հոգի, անեղ և անմահ բնութիւն, արարիչ հրեշտակաց և մարդկան և ամենայն եգեղոց, և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս:

Բ

Հաւատով խոստովանիմ, և երկիրպագանեմ քեզ, անբաժանելի լոյս, միանական Սուրբ Երրորդութիւն, և մի Աստուածութիւն. արարիչ լուսոյ և հալածիչ խաւարի, հալածեա ի հողոյ իմմէ՝ զխաւար մեղաց և անգիտութեան և լուսաւորեա զմիտս իմ ի ժամուս յայսմիկ աղօթել քեզ ի հաճոյս և ընդունիլ ի քէն զինդրուածս իմ, և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս:

Գ

Հայր երկնաւոր Աստուած ճշմարիտ. որ սուսքեցեր զՈրդիդ քո սիրելի ի ինդիր մոլորեալ ոչխարին, մեղայ յերկինս և առաջի քո. ընկալ զիս որպէս զանառակ որդին, և զգեցո ինձ զպատմուճանն զառաջինն, զոր մերկացայ մեղօք և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս:

Դ

Որդի Աստուծոյ, Աստուած ճշմարիտ, որ խոնարհեցար ի հայրական ծոցոյ, և առեր մարմին ի Սրբոյ Կուսէն Մարիամայ, վասն մերոյ փրկութեան, խաչեցար, թաղեցար, և յարեար ի մեռելոց, և համբարձար փառօք առ Հայր. մեղայ յերկինս և առաջի քո. յիշեա զիս որպէս զաւազակն՝ յորժամ դաս արքայութեամբ քով, և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս:

Ե

Հոգի Աստուծոյ, Աստուած ճշմարիտ որ իջեր ի Յորդանան և ի վերնատունն և լուսաւորեցեր զիս մկրտութեամբ սուրբ Աւագանին. մեղայ յերկինս և առաջի քո. մաքրեա զիս վերստին Աստուածային հրով քով որպէս հրեղէն լեզուօք սուրբ զառաքեալսն և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս:

2

Ամենախնամ Տէր, զիր պահապան աչաց իմոց զերկիրդ քո սուրբ՝ ոչ եւս հայիլ յարաս. եւ ականջաց իմոց ոչ ախորժեղ լսել զքանս չարութեան. եւ բերանոյ իմոյ՝ ոչ խօսիլ դատութիւն, եւ սրտի իմոյ՝ ոչ խորհիլ զչարութիւն, եւ ձեռաց իմոց՝ ոչ գործել զանիրաւութիւն եւ ոտից իմոց՝ ոչ գնալ ի ձանապարհս անորէնութեան. այլ ուղղեա զչարժումն սոցա լինիլ միշտ ըստ պատուիրանաց քոց յամենայնի. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

Է

Հուր կենդանի Քրիստոս, զհուր սիրոյ քո զոր արկեր յերկիր, բորբոքեա յանձն իմ, զի այրեսցէ զախտ հոգւոյ իմոյ, եւ սրբեացէ զսիրոյ՞ մտաց իմոց, եւ մաքրեացէ զմեղս մարմնոյ իմոյ, եւ վարեացէ զլոյս գիտութեան քոյ ի սրտի իմում եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

Ը

Արքայ երկնաւոր, սուր ինձ զարքայութիւն քո, զոր խոստացար սիրելեաց քոց. եւ զօրացո զսիրտ իմ ատել զմեղս. եւ սիրել քեզ միայն, եւ առնել զկամս քո. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

Թ

Խնամող արարածոց, պահեա նշանաւ խաչի քո՝ զհոգի եւ զմարմին իմ ի պատրանաց մեղաց, ի փորձութեանց դիւաց. եւ ի մարդոց անիրաւաց, եւ յամենայն վասնդից հոգւոյ եւ մարմնոյ, եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

Ճ

Պահապան ամենայնի Քրիստոս, աջ քո հովանի լիցի ի վերայ իմ, ի տուէ եւ ի գիշերի, ի նստիլ ի տան եւ ի գնալ ի ձանապարհ, ի ննջել եւ ի յառնել, զի մի երբէք սասանեցայց, եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՃԱ

Աստուած իմ, որ բանաս գձեան քո եւ շուս զամենայն արարածս ողորմութեամբ քով. քեզ յանձն առնեմ գանձն իմ, զու հոգա եւ պատրաստեա զզէտս հոգւոյ եւ մարմնոյ իմոյ, յայտնեալէ մինչև յաւիտեան:

ՃԲ

Քեզ լիաք եւ երկրպագութիւն անբաժանելի Սուրբ Երրորդութեանդ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՀԱՆԳԱՆԱԿ


Կը հաւատամ ամենակալ Հօր Աստուծոյ, երկնի և երկրի Ստեղծողին, և անոր Միածին Որդւոյն, մեր Տէրօջը Յիսուսի Քրիստոսի, որ յղացաւ Սուրբ Հոգիէն, ծնաւ Մարիամ կոյսէն, չարչարուեցաւ Պոնտացի Պիղատոսի օրով, խաչուեցաւ, մեռաւ և թաղուեցաւ, և երրորդ օրը յարեաւ մեռեալներէն, երկինք համբարձաւ և ամենակալ Հօր Աստուծոյ աջ կողմը նստաւ. անտի պիտի գայ դասել կենդանիները և մեռեալները: Կը հաւատամ Սուրբ Հոգւոյն, կաթողիկէ սուրբ եկեղեցւոյն, սուրբերու հաղորդութեան, մեղաց թողութեան, մարմնոյ յարութեան և յաւիտենական կենաց: Ամէն:

(Բ Գար)

ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾ

Մ. ԵԿՄԱԼԵԱՆ

Moderato. *pp*



Սուրբ Աստուած սուրբ եւ հը զօր սուրբ եւ ան — ման, որ ծը նար



եւ յայտնեցար, ո — զորմեա մեզ, Սուրբ Աստուած սուրբ եւ հը-



զօր սուրբ եւ ան ման, որ ծընար եւ յայտնեցար ո — զորմեա մեզ:

ԾՆՆԻՄԱՆ

Սուրբ Աստուած սուրբ եւ հըզօր սուրբ եւ անման,
որ ծընար եւ յայտնեցար, ոզորմեա մեզ:

ԽԱՉԻ

Սուրբ Աստուած սուրբ եւ հըզօր, սուրբ եւ անման,
որ խաչեցար վասն մեր, ոզորմեա մեզ:

ՉԱՏԿԻ

Սուրբ Աստուած սուրբ եւ հըզօր, սուրբ եւ անման,
որ յարեար ի մեռելոց ոզորմեա մեզ:

ՀԱՄԱՐԱՐՉՄԱՆ

Սուրբ Աստուած սուրբ եւ հըզօր, սուրբ եւ անման,
որ համբարձար փառօք սա հայր ոզորմեա մեզ:



Ք Ր Ի Ս Տ Ո Ս Ի Մ Է Չ

Moderato.

Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ Որ էնն Աստուած աստ բազմեցաւ .
 Ե - կե - դեցիս մի անձն և - ղև համ բոյ ըրս յօդ լըրման տըւաւ .

Խաղաղութեան ձայն հընչև ցաւ սուրբ ողջու նի հրա ման տըւաւ .
 Թըչնա մութիւ նըն հե - ու ցաւ սէրն յընդհա - նսուրբս սրի ոև ցաւ .

Արդ պաշտօնեայք բարձեալ ըղ ձայն տուք օրհնութիւնն ի մի բերան

Մի առ նախան աստուածութեանն , ո ռում սրովբեքն են սրբ բա — բան :

Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ
 Որ էնն Աստուած աստ բազմեցաւ .
 Խաղաղութեան ձայն հընչեցաւ
 Սուրբ ողջու նի հրաման տըւաւ .
 Եկեղեցիս մի անձն եղև
 Համբոյրըս յօդ լըրման տըւաւ .
 Թըչնամութիւնըն հեռացաւ
 Սէրն յընդհանուրըս սրբոեցաւ .
 Արդ պաշտօնեայք բարձեալ ըղձայն
 Տուք օրհնութիւնն ի մի բերան
 Միանախան աստուածութեանն ,
 Որում սրովբեքն են սրբաբան :



ՓԱՌԲ ՔԵԶ ՏԷՐ

Andante.

Musical notation for the first system of 'ՓԱՌԲ ՔԵԶ ՏԷՐ'. It consists of two staves in 4/4 time with a key signature of one sharp (F#). The top staff has a treble clef and contains two measures of music. The bottom staff has a bass clef and contains two measures of music. Dynamics include *ff* and a hairpin crescendo.

Musical notation for the second system of 'ՓԱՌԲ ՔԵԶ ՏԷՐ'. It consists of two staves in 4/4 time with a key signature of one sharp (F#). The top staff has a treble clef and contains four measures of music with lyrics: Աստ — — ուս մե — ր։. The bottom staff has a bass clef and contains four measures of music. Dynamics include *p* and hairpin crescendos and decrescendos.

ՅԱՄԵՆԱՅՆԻ

Andante.

Musical notation for the first system of 'ՅԱՄԵՆԱՅՆԻ'. It consists of a single staff in 3/4 time with a key signature of one flat (Bb). The top staff has a treble clef and contains five measures of music with lyrics: Յա մե — — նայ - նի օրճ - նեալ ես տէր. Օրճ-.

Musical notation for the second system of 'ՅԱՄԵՆԱՅՆԻ'. It consists of a single staff in 3/4 time with a key signature of one flat (Bb). The top staff has a treble clef and contains five measures of music with lyrics: նեմք ըզ - քեզ գո վեմք ըզ - քեզ Գո հա նամք ըզ-


Musical notation for the third system of 'ՅԱՄԵՆԱՅՆԻ'. It consists of a single staff in 4/4 time with a key signature of one flat (Bb). The top staff has a treble clef and contains five measures of music with lyrics: քէն, ա դա չեմք ըզ քեզ տէր. Աստ — ուած մե - - - - - ր։

Յամենայնի օրճնեալ ես Տէր,
 Օրճնեմք ըզքեզ գովեմք ըզքեզ,
 Գոհանամք ըզ քէն, ադաչեմք ըզ քեզ Տէր.
 Աստուած մեր:

ՄԱՐՄԻՆ ՏԷՐՈՒՆԱԿԱՆ

Andante

pp



Մարմին տէրու նա — — կան եւ ա րիւն փրրկչա — կան

pp



կայ ա — ու — ջի. երկ նա յին զօրու թիւնքն յանե ըն ւոյթս

pp

pp

pp



եր գնն եւ ա — սնն ան հան — զիստ բար — բա ոով.



սուրբ սուրբ սուրբ, Տէր զօ — ռու — թեանց:

pp



Մարմին տէրունական
 եւ արիւն փրրկչական կայ առաջի.
 երկնային զօրութիւնք յանրեւոյթս
 երգնն եւ ասնն անհանգիստ բարբառով.
 Սուրբ, սուրբ, սուրբ, տէր զօրութեանց:



ՀԱՅՐ ՄԵՐ

Andante

Հայր մեր — ք որ յերկինս ես, սուրբ ե — ղի ցի
 ա նուն քո. ե — կես ցէ ար քա յու թիւն քո ե ղի ցին կամք
 քո որ պէս յեր կինս եւ յեր — կրի. զհաց մեր հա նա պա զորդ
 սուրբ մեզ ա — յ — սօր. թող մեզ ըզ պար — տիս մեր,
 որ պէս եւ մենք թո ղումք մերոց պարտա պա նաց. եւ մի տա նիր
 զմեզ ի փորձու թիւն. ալլ փրկեա ի չա — — ըէ:

Հայր մեր որ յերկինս ես,
 Սուրբ եղիցի անուն քո.
 Եկեացէ արքայութիւն քո,
 Եղիցին կամք քո որպէս յերկինս
 եւ յերկրի.
 Զհաց մեր հանապազորդ

Տուր մեզ այսօր.
 Թող մեզ ըզպարտիս մեր,
 Որպէս եւ մենք թողումք մերոց
 պարտապանաց.
 Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն.
 Ալլ փրկեա ի չարէ:

ՍՈՒՐԲ ՍՈՒՐԲ

Andante.

pp

Սու - - - - - րբ .

Սու - - - րբ տէ - ր զօ - րու - թեանց ,

Լի են եր - կիւք և եր - կիր փա - ոօք քո ,

Օրհնու - թիւն ի բար - ձունս . օրհ - - - նեալ

որ և - կիր եւ գա - լոցդ ևս անուամբ տեառն .

Ո - Վ ս ա - - նա ի բա - ր ձու - նս :

Սուրբ .

Սուրբ տէր զօրութեանց

Լի են երկիւք և երկիր փառօք քո ,

Օրհնութիւն ի բարձունս .

Օրհնեալ որ եկիր

եւ գալոցդ ևս անուամբ տեառն

Ովսանա ի բարձունս :

ԱՄԷՆ ԵՂԻՑԻ

Moderato.

Ա — մէ — ն : Ե զի — ցի ա — նուն տեառն օրհնեալ յայսրմ

հե տէ մինչև յա — լիտ — հան : Ե — զի — ցի ա նուն

տեառն օրհնեալ յայ սրմ հե տէ մինչև յա — լիտ — հան : Ե և և — զի —

poco a poco Rit

ցի անուն տեառն օրհնեալ յայ սրմ հե տէ մին — չև յա — լիտ հան :

Ամէն, Եղիցի անուն տեառն օրհնեալ,
Յայսրմ հետէ մինչև յաւիտեան .

Եղիցի անուն տեառն օրհնեալ
Յայսրմ հետէ մինչև յաւիտեան .

Եւ Եղիցի անուն տեառն օրհնեալ
Յայսրմ հետէ մինչև յաւիտեան :



Օ Ր Հ Ն Ե Ց Ի Ց Ը Չ Տ Է Ր

Andante.

Դաշնակահարից
Յ. ԻԻՎԷՉԵԱՆ.

Օրհնեցից ըզՏէր, յս - մե - նայն ժամ, յս մե - նայն ժամ.

p < > *f*

Օրհնեցից ըզՏէր, յս - մե նայն ժամ, յս մե - նայն ժամ.

p < > *f*

Օրհնութիւն նո - րա, Ի ըն - րան իմ, Ա. — մէն:

f *p* *f* < >

Օրհնութիւն նո - րա, Ի ըն րան իմ, Ա. — մէն:

f *p* *f* < >

Օրհնեցից ըզՏէր
 Յամենայն ժամ
 Օրհնութիւն նորա
 Ի ընրան իմ, Ամէն:

ԱՄԷՆ ՀԱՅՐ ՍՈՒՐԲ

Moderato

Դաւենաւորեց՝ Յ. Իսկէզեան

1 Ա. — մէ — — — ն — — — — — յր
 2 Ո — — — — — ր — — — — — զի — — — — —
 3 Հո — — — — — զի — — — — — ր

սու — — — — — րբ: Օրհնութիւն հօր եւ որդոյ
 եւ Սրբոյ Հոգւոյն, Այժմ եւ միշտ եւ յա — լիտ — եանս
 յա լի տե նից, ա — մէն:

Ամէն Հայր սուրբ, Որդիդ սուրբ,
 Հոգիդ սուրբ: Օրհնութիւն հօր եւ
 Որդոյ եւ Սրբոյ Հոգւոյն, այժմ եւ միշտ
 եւ յաւիտեանս յաւիտենից ամէն:

Երբակ միութիւն,
զիւրց խնամող,
ւ ինձ ողորմեա:

Էդ հայր անըսկիզբն,
ակից Որդի,
միշտ Սուրբ Հոգի:

Բագաւոր փառաց,
ողութեանց տուող
ող ինձ ըզյանցանս:

Չարթիր, Տէր, յօգնել:
արթո ըզթմրեալս,
ուարթնոց նմանել:

Ընկալ զիս զթած,
նկալ ողորմած,
նկալ մարդասէր:

Ժողովող բարեաց,
ողովեա եւ զիս
ողովս անդրանկաց:

11
A 93129

ՏԷՐ ՈՂՈՐՄԵԱ

Andante

ԿՈՐԻՏՈՍ ԱՍՏՎԱԳՅԵՏ

pp Տէր ո — զոր — մեա, *p* Տէր ո — զոր — մեա,

f Տէր ո — զոր — մեա, *p* Տէր ո — զոր — մեա:

2 Ամենատուր Երրորդութիւն
Տուր աշխարհիս խաղաղութիւն:

3 Տէր ողորմեա, Տէր ողորմեա,
Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:



ՍԻՐԻՈՅ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ
ՀՍՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ
ՀԱՒԱՏՈՅ ՀԱՆԳԱՆԱԿԸ

ԿԸ ՀՍԻՍՍՍ

1. Կը հաւատամ երկնից ու երկրի Արարչին, Ամենակարող մէկ Աստուծոյ — Հօրը, Որդւոյն և Սուրբ Հոգւոյն:

2. Կը հաւատամ թէ՛ մարդ Աստուծոյ պատկերովը ստեղծուած բայց մեղքի մէջ ինկած է, և միայն Աստուծոյ շնորհքովը կրնայ ազատիլ մեղքի իշխանութենէն և արժանանալ Աստուծոյ հաճութեան:

3. Կը հաւատամ թէ՛ մեր Տէրը Յիսուս Քրիստոս մարմնացաւ և իր կեանքովն ու վարդապետութիւնովը, չարչարանքովն ու մահուամբը մարդկային սեռին համար կատարեալ փրկութիւն մը պատրաստեց: Կը հաւատամ թէ մեռիչներէն յարութիւն առնելով Հօրը աջ կողմը մեղի համար կը բարեխօսէ, և Անոր անուան մէջն հաւատացող ձրիաբար մեղաց թողութիւն ու յաւիտեհական կեանք կ'ստանայ:

4. Կը հաւատամ թէ Սուրբ Հոգին մարդոց սրտերուն մէջ գործելով զանոնք կը համոզէ մեղքի, արդարութեան և դատաստանի մասին, թէ անոր միջոցաւ նոր և սուրբ բնաւորութեան մը կը տիրանանք:

5. Կը հաւատամ թէ մեր Տէրը Յիսուս Քրիստոս ունի երկրի վրայ տեսանելի եկեղեցի մը, որուն խորհուրդներն են Մկրտութիւն և Հաղորդութիւն: Կը հաւատամ թէ Սուրբ Գիրքը Աստուծոյ ներշնչութեամբ գրուած է, և կը բաղկանայ Հին ու Նոր Կտակարաններէ. և թէ սակաւ է կանոնը եկեղեցւոյ հաւատքին ու գործերուն:

6. Կը հաւատամ մեր Տէրովը փառքով զայտեան, մեղելոց յարութեան, մեղաւորներուն յաւիտեանական դատապարտութեան և արդարներուն յաւիտեանական կենաց:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039718

[500 ր.]

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹՅՈՒՆ

Նիկիական Հանգանակ
Ներսէս Շնորհալիի Աղօթքը
Առաքելական Հանգանակ

Ամէն հայր Սուրբ	Էջ	9
Առաւօտ լուսոյ	»	10
Եղիցի	»	7
Հայր մեր	»	5
Մարմին տէրունական	»	4
Յամենայնի	»	3
Սուրբ Սուրբ	»	6
Սուրբ Աստուած	»	1
Տէր ողորմեայ	»	11
Փառք քեզ Տէր	»	3
Գրիստոս ի մէջ	»	2
Օրհնեցից զՏէր	»	8
Հայ Աւետ. Հանգանակ	»	12



Ստանալու համար գիմե՛կ՝

Պէյրուքի Հայ Աւետ. Ա. Եկեղեցւոյ Երգարանի Հրատարակչական Յանձնախումբից:

ԳԻՆ 3 ՖՐԱՆԲ